Հավելված 2

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները Ուսումնամեթոդական վարչությունը ֆակուլտետների հետ համատեղ կազմակերպել է համաձայն «**Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կարգ**»-ի, հարցաշարի և ժամանակացույցի (առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 10-ից մինչև մարտի 07-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 22-ից մինչև ապրիլի 30-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար)։ Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով, համալսարանական էլեկտրոնային հասցեների միջոցով։

Հարցման արդյունքների օբյեկտիվ պատկեր ստանալու համար կարևոր է ուսանողների մասնակցությունը։ 2023-2024 ուստարվա հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման **1136** ուսանողից **483-ը** (ուսանողական հիմնական համակազմի 42.52 %-ը), հեռակա ուսուցման **894** ուսանողից **178-ը** (ուսանողական հիմնական համակազմի 19.91 %-ը)։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2023-2024 ուստարվա ուսանողական հարցումների վերլուծությունը մեր կողմից կատարվել է 3 տարիների համեմատությամբ։

Հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում են կոռուպցիոն երևույթներին, մասնաճյուղում տոկոս չեն կազմում։

Հարցաշարի երրորդ հարցը վերաբերում է կրթական ծրագրի ղեկավարների աշխատանքին։ Առկա և հեռակա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 173 ուսանող, որից 159-ը (92%) արդյունավետ է համարել կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը։

Հարցաշարի ֆակուլտետների, դեկանատների և մասնագիտական ամբիոնների կրթության կազմակերպման գնահատումն ունի հետևյալ պատկերը։

Դեկանատի աշխատակիցների վերաբերյալ գրանցված ցուցանիշով ամենաբարձրը առկա ուսուցման համակարգում ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը։ Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը։

Հավելված 2





Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունեն Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնները, իսկ ամենացածրը՝ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնը, իսկ ամենացածրը՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը:

Հավելված 2



Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Կիրառական արվեստի ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Կիրառական արվեստի ֆակուլտետը (մեկ դասախոսի գնահատման արդյունքով), իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը:

Հավելված 2



Հարցաշարի հաջորդ գնահատումը, որը վերաբերում է դասախոսի գնահատմանը, արդյունքներն ուղարկվել են ֆակուլտետներ և մասնագիտական ամբիոններ՝ նիստերում քննարկելու համար։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցումն ընդգրկում է նաև ուսանողների կողմից կարծիք- առաջարկություններ.

- դասախոսական աշխատանքի ընդունել ավելի բանիմաց երիտասարդ դասախոսների,
- միևնույն դասընթացի անընդմեջ դասախոսությունը ծանր է և հոգնեցնող,
- «Անգլերեն և գրականություն» կրթական ծրագրի մասնագիտական դասընթացները նպատակահարմար չէ իրականացնել միայն ուրբաթ և շաբաթ օրերին,
- ավելացնել գործնական և սեմինար դասաժամերը,
- ունենալ լավ համակարգիչներ և լսարաններն ապահովել ժամանակակից սարքավորումներով (պրոյեկտորներ),
- դասախոսություններն անցկացնել սահիկաշարի միջոցով,
- Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսումնական պրակտիկաների համար տրամադրել անհրաժեշտ նյութեր,
- ավելացնել մասնագիտական գրականությունը,
- ունենալ օբյեկտիվ գնահատում,
- «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով տալ մանկավարժի որակավորում։